



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. ապրիլին /վերլուծություն/

2010թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15464 գործարքներ, որոնց քանակը 2009թ. ապրիլի համեմատ աճել է 35.6%-ով, իսկ 2010թ. մարտի համեմատ՝ 3.4%-ով:

2010թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3880 օտարման գործարքների 80.5%-ը կազմել են առուվաճառքները, 17.8%-ը՝ նվիրատվությունները և 1.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. ապրիլին, 2010թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 1.5%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ աճել՝ 23.8%-ով:

2010թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. ապրիլին, 2010թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.8%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ աճել՝ 48.4%-ով:

2010թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2009թ.	ապրիլ 2010թ.	մարտ 2010թ.
Կենտրոն	485100	469200	469200
Արաբկիր	366900	389300	380000
Քանաքեռ-Զեյթուն	289000	288500	286100
Նոր-Նորք	238600	243000	237600
Ավան	234600	242500	239300
Էրեբունի	250600	251400	251400
Շենգավիթ	252000	256900	252200
Դավթաշեն	265600	277200	274000
Աջափնյակ	249500	242300	240500
Մալաթիա-Սեբաստիա	232400	245500	240300
Նուբարաշեն	134700	144500	144300
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	272600	277300	274100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. մարտի համեմատ, աճել են 1.2%-ով:

2010թ. ապրիլին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 294 բնակարաններ, որոնց քանակը 2010թ. մարտի համեմատ նվազել է 19.9%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ աճել՝ 39.3%-ով:

2010թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2009թ.	ապրիլ 2010թ.	մարտ 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	130300	142700	142700
	Ապարան	43300	45400	44800
	Թալին	48800	52800	52800
Արարատ	Արտաշատ	88400	93400	91300
	Մասիս	131500	130900	128100
	Վեդի	90100	94400	94400

	Արարատ	84400	85700	87400
Արմավիր	Վաղարշապատ	171600	162400	158300
	Արմավիր	119800	119500	120200
	Մեծամոր	77500	83800	82200
Գեղարքունիք	Սևան	92100	93300	94600
	Գավառ	50600	46400	46400
	Մարտունի	80200	86200	85400
	Վարդենիս	33800	33200	33200
	Ճամբարակ	18500	19500	19500
Լոռի	Վանաձոր	86100	93000	90500
	Ստեփանավան	55000	58200	58200
	Սպիտակ	73000	80700	81300
	Ալավերդի	33100	31600	31000
	Տաշիր	37000	35700	35600
	Թումանյան	6100	6100	6100
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	14000	14200	14100
Կոտայք	Արշակունի	141000	160600	160600
	Նոր Հաճն	141400	129700	126800
	Բյուրեղավան	102000	103300	100900
	Եղվարդ	125200	117400	117400
	Հրազդան	62600	62500	63400
	Ծաղկաձոր	182300	181500	181500
	Չարենցավան	81900	78100	76200
Շիրակ	Գյումրի	98900	120300	120300
	Արթիկ	60100	59400	59400
	Մարալիկ	31500	30800	30800
Սյունիք	Գորիս	125500	139600	139600
	Կապան	112300	100600	100600
	Սիսիան	92600	79000	79500
	Մեղրի	57100	58700	58700
	Ագարակ	34600	33500	33500
	Քաջարան	57000	59800	61100
	Դասատակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	74400	72300	71600
	Եղեգնաձոր	113400	106800	105800
	Զերմուկ	123300	114000	112600
Տավուշ	Դիլիջան	100400	102100	99300
	Իջևան	135400	138700	138700
	Բերդ	45000	42000	42000
	Նոյեմբերյան	35400	33900	33900
	Այրում	24000	24100	24100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. մարտի համեմատ, աճել են 0.6 %-ով:

2010թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 461 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 158, մարզերում միասին վերցրած՝ 303: 2010թ. ապրիլին, 2010թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 8.5%-ով, ընդ որում Երևանում աճել է 36.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 1.9%-ով: 2009թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի

գործարքների քանակն աճել է 68.9%-ով, ընդ որում Երևանում՝ 3.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 33.5%-ով:

2010թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2009թ.	ապրիլ 2010թ.	մարտ 2010թ.
Կենտրոն	521200	487200	486300
Արաբկիր	415100	393000	386000
Քանաքեռ Զեյթուն	320700	293300	291100
Նորք Մարաշ	317500	286200	285300
Ավան	283500	247700	243300
Էրեբունի	294700	259400	255700
Շենգավիթ	285000	259400	255200
Դավթաշեն	314300	283400	280500
Աջափնյակ	285300	249000	246500
Մալաթիա-Մեքաստիա	273000	246800	244500
Նուբարաշեն	163300	148100	147700
Միջինը Երևանում /բացի Նոր Նորքից/	315800	286700	283800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. մարտի համեմատ, աճել են 1.0%-ով:

2010թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2009թ.	ապրիլ 2010թ.	մարտ 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	142600	149500	148000
	Ապարան	45400	49400	48200
	Թալին	52700	56000	55300
Արարատ	Արտաշատ	100700	100900	100600
	Մասիս	145300	133300	129900
	Վեդի	95800	98200	97000
Արմավիր	Արարատ	86700	93600	93500
	Վաղարշապատ	180200	167700	166500
	Արմավիր	127100	126000	125700
Գեղարքունիք	Սևան	103600	96700	96500
	Գավառ	59300	49400	48700
	Մարտունի	86500	89200	87800

	Վարդենիս	40400	35500	35200
	Ճամբարակ	23300	21900	21500
Լոռի	Վանաձոր	100800	99000	97500
	Ստեփանավան	60100	61900	61600
	Սպիտակ	76500	84000	83400
	Ալավերդի	38800	35400	35200
	Տաշիր	41700	39300	38700
	Թումանյան	10400	10700	10500
	Շամլուղ	7400	7500	7500
	Ախթալա	18200	18200	18200
	Կոտայք	Աբովյան	165900	171200
Նոր Հաճն		149500	135900	135100
Բյուրեղավան		115500	109600	109600
Եղվարդ		133600	128400	128200
Հրազդան		74700	66800	65700
Ծաղկաձոր		283000	310200	307600
Չարենցավան		96200	81100	80400
Շիրակ	Գյումրի	118000	125100	124400
	Արթիկ	67600	62400	61600
	Սարալիկ	36200	32800	31900
Սյունիք	Գորիս	130400	144600	144400
	Կապան	117200	105100	104600
	Սիսիան	99400	84900	84600
	Մեղրի	61400	61800	60700
	Ագարակ	37900	35500	35200
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	83300	75200	74200
	Եղեգնաձոր	120900	115200	114900
	Ջերմուկ	110500	120400	118700
Տավուշ	Դիլիջան	112400	106600	103100
	Իջևան	149900	142900	142100
	Բերդ	48300	44600	44100
	Նոյեմբերյան	38500	36000	35500
	Այրում	25800	26000	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. մարտի համեմատ, աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1429 միավոր /601.65 հա/ հողեր, որից Երևանում` 73 միավոր /5.71 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 698 միավոր /265.55 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.55 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 560 միավոր /53.41 հա/, որից Երևանում` 52 միավոր /3.80 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 150 միավոր /11.54 հա/, որից Երևանում` 17 միավոր /1.37 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 9 միավոր /4.10 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /1.53 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 4 միավոր /0.21 հա/ ընդհանուր մակերեսով,

- ջրային հողեր՝ 3 միավոր /4.20 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.11 հա/:

2010թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1266 միավորի /539.33 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 56 միավոր /4.41 հա/, նվիրատվության գործարքներ՝ 127 միավորի /43.50 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.19 հա/ և փոխանակության գործարքներ՝ 36 միավորի /18.81 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.11 հա/:

Հանրապետությունում 2010թ. ապրիլին, 2009թ. ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 23.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 40.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 119.53 հա, որից 112.59 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.6%-ը կամ 312 գործարքներ /82.30 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 12 գործարքներ /0.88 հա/, իսկ 75.2%-ը կամ 952 միավորը /457.02 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 44 միավոր /3.54 հա/:

2010թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 2 գործարք /0.02 հա/:

Ստորև ներկայացվում է 2010թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	8	0.34	4	0.54	1	0.10	0	0.00	35	3.12	8	0.32
Արագածոտն	5	1.67	0	0.00	0	0.00	6	0.25	72	71.23	0	0.00	25	2.68	3	0.20
Արարատ	3	0.69	1	2.00	8	0.72	6	0.07	119	41.79	0	0.00	45	3.64	4	0.30
Արմավիր	4	1.36	1	0.05	2	0.08	11	0.15	86	111.23	0	0.00	67	6.53	7	0.11
Գեղարքունիք	8	20.54	1	0.89	14	1.02	7	0.12	13	2.97	0	0.00	19	2.26	1	0.004
Լոռի	4	2.08	0	0.00	28	3.31	9	0.33	65	35.34	0	0.00	9	1.54	10	0.69
Կոտայք	16	17.34	2	0.14	21	1.30	28	4.05	110	68.00	0	0.00	82	10.72	9	3.24
Շիրակ	1	1.00	1	0.60	15	0.69	9	0.16	32	35.81	0	0.00	17	2.32	3	0.07
Սյունիք	4	8.30	0	0.00	2	0.17	3	0.04	38	33.69	1	0.08	21	1.66	0	0.00
Վայոց Ձոր	1	0.23	0	0.00	2	0.15	4	0.02	2	0.63	0	0.00	3	0.35	0	0.00
Տավուշ	2	1.71	1	0.19	54	3.92	7	0.27	30	14.93	1	0.16	11	1.08	0	0.00
Ընդամենը	48	54.92	7	3.87	154	11.70	94	6.00	568	415.72	2	0.24	334	35.90	45	4.93

Ստորև ներկայացվում է 2010թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի

նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	12	0.88	0	0.00	8	0.34	4	0.54	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	10	1.91	5	1.67	0	0.00	0	0.00	5	0.24
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	3.48	3	0.69	1	2.00	8	0.72	6	0.07
Արմավիր	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	16	1.64	4	1.36	1	0.05	2	0.08	9	0.15
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	29	22.58	8	20.54	1	0.89	14	1.02	6	0.12
Լոռի	2	0.13	0	0.00	0	0.00	2	0.13	38	5.49	3	1.98	0	0.00	28	3.31	7	0.20
Կոտայք	3	0.04	0	0.00	0	0.00	3	0.04	60	20.98	12	15.53	2	0.14	21	1.30	25	4.01
Շիրակ	7	0.37	0	0.00	6	0.34	1	0.03	19	2.09	1	1.00	1	0.60	9	0.35	8	0.14
Սյունիք	1	0.16	0	0.00	1	0.16	0	0.00	8	8.36	4	8.30	0	0.00	1	0.02	3	0.04
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.17	0	0.00	0	0.00	2	0.15	4	0.02
Տավուշ	2	0.051	0	0.00	1	0.05	1	0.001	62	6.04	2	1.71	1	0.19	53	3.87	6	0.27
Ընդամենը	31	1.65	0	0.00	16	0.89	15	0.76	266	72.74	42	52.78	7	3.87	138	10.82	79	5.26

Հանրապետությունում 2010թ. ապրիլին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 6 գործարքներ /2.13 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. ապրիլին, 2009թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 20.1%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 20.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 20.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 30.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 51.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները` 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	1.67	50.0	90.0	70.6	35	23.23	365.0	12000.0	4368.5
Ապարան						26	8.88	86.5	2727.3	578.8

Թային						8	29.94	93.6	5494.5	530.2
Ծաղկահովիտ						1	4.86	79.5	1000.0	249.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	0.69	102.0	1796.5	1181.2	68	17.83	335.1	10833.3	2250.5
Մասիս						14	4.84	200.0	11904.8	3010.0
Վեդի						36	18.56	207.0	10795.1	1824.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	0.93	69.1	69.1	69.1	32	16.05	294.3	9090.0	1245.5
Բաղրամյան						25	78.78	90.6	2561.1	705.4
Վաղարշապատ	3	0.43	86.3	97.7	90.1	29	16.39	444.4	11764.7	3210.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	3.39	38.4	374.3	140.9	6	1.25	199.8	1875.0	410.0
Ճամբարակ	1	1.50	1440.0	1440.0	1440.0	6	1.49	60.5	953.3	278.5
Մարտունի	2	0.65	122.2	151.3	136.7	1	0.22	51.1	2850.0	615.0
Սևան	1	15.00	3488.4	3488.4	3488.4			52.2	2134.8	250.0
Վարդենիս								41.2	2575.1	442.5
Լոռու մարզ										
Այվերդի						10	2.93	170.4	6424.2	835.5
Գուգարք								234.6	6065.9	1100.0
Սպիտակ						2	0.22	250.0	5555.5	635.5
Ստեփանավան	3	1.98	240.0	596.7	409.9	11	13.66	90.6	1686.6	357.8
Տաշիր						42	18.53	45.3	1384.4	183.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	10.39	247.5	547.7	325.9	37	9.19	279.3	11942.7	4623.0
Եղվարդ	5	3.12	116.4	232.9	187.4	55	46.13	174.4	11971.8	3486.4
Հրազդան	3	2.02	174.5	724.1	411.5	15	12.44	130.5	10256.4	1740.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	11.93	252.0	1693.1	533.8
Ամասիա								40.9	261.0	128.6
Անի	1	1.00	105.0	105.0	105.0	3	2.76	110.6	546.9	300.0
Աշոցք						11	13.19	58.5	215.8	112.4
Արթիկ						10	7.94	79.4	1428.6	271.6
Սյունիքի մարզ										
Գորիս						4	1.57	92.6	1023.2	525.2
Կապան	4	8.30	238.6	515.9	435.9	2	2.05	120.0	841.6	300.5
Մեղրի						5	0.64	193.0	3000.0	625.3
Սիսիան						27	29.43	46.3	1977.4	325.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	0.53	125.0	10000.0	1600.0
Վայք						1	0.10	58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ						12	4.64	213.3	3783.8	572.5
Իջևան	2	1.71	165.3	196.0	180.6	14	8.08	267.5	9454.5	1100.0
Լոյենբերյան						4	2.21	46.7	7368.4	815.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. ապրիլին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						18	17781.0	130.7	22200.0	2573.8
Ապարան						2	1127.0	124.1	609.6	270.0
Թալին								63.2	1454.8	142.0
Ծաղկահովիտ						4	6871.0	60.0	214.3	79.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4000.0	532.0	532.0	532.0	9	6574.0	173.9	7140.3	893.3
Մասիս	3	1965.0	543.2	3118.6	1531.4	28	20780.0	187.5	25000.0	1216.8
Վեդի	1	1260.0	818.3	818.3	818.3	8	9028.0	126.1	5000.0	661.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	800.0	1400.0	1400.0	1400.0	22	25514.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						4	6825.0	100.0	833.3	192.5
Վաղարշապատ						40	31992.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2919.0	115.8	116.0	115.9	1	570.0	186.6	1084.3	475.3
Ճամբարակ	7	4448.0	108.0	161.8	123.5	1	800.0	71.3	2286.2	144.4
Մարտունի	3	1648.0	119.1	119.8	119.3	14	15872.0	119.3	5000.0	274.5
Սևան	2	1200.0	503.3	521.9	512.6	2	3290.5	240.0	3110.4	235.0
Վարդենիս						1	2061.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1110.0	114.3	1388.9	210.1
Գուգարք	2	740.0	79.3	1914.0	996.7	1	1017.0	77.9	14083.3	786.3
Սյիսակ	24	30540.0	49.0	73.5	69.9	6	12867.0	104.9	1348.3	199.2
Ստեփանավան	1	500.0	554.4	554.4	554.4			88.2	1666.7	150.0
Տաշիր	1	1280.0	83.3	83.3	83.3	1	450.0	45.3	400.0	77.3
Վոտայքի մարզ										
Աբովյան	15	9146.7	445.5	3484.5	2541.1	48	57466.7	264.5	35353.5	2020.0
Եղվարդ	6	3862.0	1778.7	2985.8	2364.0	27	24391.0	173.6	27000.0	2868.5
Հրազդան						7	15320.0	117.7	34848.5	1337.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	967.9	317.1	3337.6	1718.3	4	2738.4	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	407.1	407.1	407.1	3	2990.0	67.9	180.6	130.0
Աշոցք						1	6330.0	40.8	144.0	60.0
Արթիկ	4	1730.0	233.3	810.0	538.0	9	11110.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	3846.0	112.2	1700.0	310.0
Կապան						14	9520.0	67.9	2638.9	245.0
Մեղրի	1	185.0	440.0	440.0	440.0	4	3280.0	68.5	632.9	156.5
Սիսիան								123.5	875.0	164.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	2500.0	96.7	7659.6	440.0
Վայք	2	1500.0	854.0	854.0	854.0	2	1000.0	120.7	1448.3	167.4
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	53	38668.0	158.3	3000.0	2946.4	11	10832.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	168.0

2010թ. ապրիլին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 15 գործարքներ 2.27 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ /0.04 հա/ Լոռու և 14-ը՝ /2.23 հա/ Շիրակի մարզերում:

2010թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 956 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. ապրիլին, 2010թ. մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 7.8%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ՝ 30.3%-ով:

2010թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 66 բնակարանների, 41 անհատական բնակելի տների, 342 հասարակական, 66 արտադրական նշանակության օբյեկտների, 398 միավոր /567.24 հա/ հողերի և 43 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր՝ 0.03 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. մարտի համեմատ նվազել է 60.0%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ՝ 94.1%-ով: 2010թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 567.24 հա հողերից 1.01 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 566.22 հա հողերի 15.69 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 8.11 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 179.17 հա, որից 178.95 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 15.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	6	2.40
Արարատ	1	5.00	28	173.95
Արմավիր	0	0.00	16	52.74
Գեղարքունիք	1	10.00	36	45.08
Լոռի	0	0.00	5	24.34
Կոտայք	0	0.00	0	0.00
Շիրակ	0	0.00	38	94.82
Սյունիք	0	0.00	19	95.82
Վայոց Ձոր	0	0.00	1	4.20
Տավուշ	0	0.00	5	8.35
Ընդամենը	2	15.00	154	501.70

2010թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2026 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. մարտի համեմատ, աճել է 3.3%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ՝ 2.1 անգամ:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.8%, առանձնատների /21.9%, հասարակական

նշանակության օբյեկտների /12.5%/ և հողերի /13.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 897 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. մարտի համեմատ, աճել է 4.1%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ՝ 2.2 անգամ:

2010թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 2712.47 հա հողեր, որից 9.43 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 97.3%-ը կամ 2638.85 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.15 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2384.32 հա, որից 2383.56 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2010թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 186 գործարքներ, որից 141-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 82.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.9%-ն՝ անհատական բնակելի տների, 2.2%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.5-ական%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների և այգետնակների, 1.1%-ը հողերի /այդ թվում 0.5%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի/ նկատմամբ: 2010թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 15.5%-ով, ընդ որում Երևանում՝ 19.5%-ով, իսկ մարզերում՝ 4.7%-ով: 2009թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 4.9 անգամ, ընդ որում Երևանում՝ 5.6 անգամ, մարզերում՝ 3.5 անգամ:

2010թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 գործարք՝ Շիրակի մարզում, որն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2010թ. մարտի համեմատ, մնացել է անփոփոխ, իսկ 2009թ. ապրիլի համեմատ նվազել՝ 80.0%-ով:

2010թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2412 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. մարտի համեմատ նվազել է 7.6%-ով, իսկ 2009թ. ապրիլի համեմատ աճել՝ 8.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.3%/: